ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 Էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Հանրային առաջնային խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների դուրսբերում փորձագիտական հարցազրույցների միջոցով. վերջիններիս բարձրաձայնումը/ներկայացվածությունը Առաջին ալիքով

Երևան 2017

Բովանդակություն

Հետազոտության մեթոդաբանության և նպատակի նկարագրություն 2
Փորձագիտական հարցազրույցների վերլուծություն 3
Հանրային խնդիրների դուրսբերումն ըստ ոլորտների 3
Հանրային խնդիրների առաջացման և լուծման պատասխանատուների դուրսբերում . 19
Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերի մեջ հանրային խնդիրների ներկայացվածության ուսումնասիրություն 22
Ամփոփում և առաջարկներ 27

Հետազոտության մեթոդաբանության և նպատակի նկարագրություն

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը» իրականացրել է հետազոտություն՝ ուղղված հանրային խնդիրների դուրսբերմանն ու Հանրային հեռուստաալիքով վերջիններիս ներկայացման ուսումնասիրմանը: Հետազոտության ընթացքում արվել են հետևյալ հարցադրումները՝

- ինչպիսի՞ փոխակերպումների են ենթարվել Հայաստանում առկա հանրային խնդիրները անկախության 25 տարիների ընթացքում,
- ի՞նչ հրատապ լուծման կարիք ունեցող հանրային խնդիրներ կան այսօր Հայաստանում,
- որո՞նք են այդ խնդիրների առաջացման հիմնական պատճառները,
- ո՞վ/ովքե՞ր են պատասխանատու հանրային խնդիրների լուծման համար,
- ո՞վ/ովքե՞ր կարող են լուծել հանրային խնդիրները,
- ի՞նչ մեխանիզմներ է հարկավոր կիրառել հանրային խնդիրների լուծման համար,
- ի՞նչ փոփոխությունների տեղի կունենան Հայաստանում մոտ ապագայում,
- ներկայացվա՞ծ են արդյոք առանձնացված հանրային խնդիրները Առաջին ալիքով,
- Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերից քանի՞սն են նվիրված հանրային խնդիրների քննարկմանը: Հաղորդաշարերի ո՞ր մասն են դրանք կազմում:

Հետազոտությունը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլը նվիրված է հանրային խնդիրների դուրսբերմանը: Այդ նպատակով իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ տարբեր ոլորտի մասնագետների հետ, որոնց միջոցով դուրս են բերվել Հայաստանում առկա հանրային խնդիրները: Փորձագետների ընտրությունը կատարվել է՝ ելնելով վերջիններիս մասնագիտացումից՝ ոլորտային բազմազանությունն ապահովելու համար: Սա նշանակում է, որ հարցազրույցներն իրականացվել են տարբեր ոլորտի մասնագետների հետ, ինչը թույլ է տվել ստանալ բազմակողմանի տեղեկատվություն:

Երկրորդ փուլն ուղղված է եղել Առաջին ալիքի եթերացանկի ուսումնասիրմանը: Սա թույլ է տվել պարզել հանրային խնդիրների ներկայացվածությունը Առաջին ալիքի հաղորդաշարերում:

Փորձագիտական հարցազրույցների վերլուծություն

Փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են տարբեր ոլորտի մասնագետների հետ՝ բազմակողմանի տեղեկատվություն և ամբողջական պատկեր ստանալու համար: Հարցազրույցների ընթացքում քննարկվել են հանրային խնդիրների հետ առնչություն ունեցող մի շարք հարցադրումներ, որոնց վերլուծությունը ներկայացված է ստորև:

Հանրային խնդիրների դուրսբերումն ըստ ոլորտների

Այսօր հայ իրականությունը գտնվում է մի փուլում, որտեղ նախկինում գործող համակարգը, կառույցներն ու ինստիտուտները կորցրել են իրենց գործառնության արդյունավետությունը, իսկ նոր համակարգն ու մեխանիզմները դեռևս լիարժեք չեն ձևավորվել: Հայաստանի ներկայիս վիճակի վրա իր ազդեցությունն է թողել ԽՍՀՄ անդամ-երկիր լինելու հանգամանքը և հետխորհրդային կայացման բարդությունը: Հայ իրականությունը ենթարկվում է ակտիվ փոփոխությունների, որոնք անդրադառնում են հանրության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտների վրա՝ տնտեսության, քաղաքականության, կրթության, հասարակական կառույցների, դատաիրավական համակարգի և այլն: Մի կողմից Հայաստանում դադարել է գործառնել այն համակարգը, որը գոյություն ուներ, մյուս կողմից ձևավորվել է նոր հասարակարգ, որի տարրերը ներմուծվում են արտասահմանյան երկրներից և ունեն ադապտացման կարիք:

Քաղաքագետը նշում է, որ այս առումով Հայաստանը գտնվում է բարդ իրավիճակում, քանի որ հայ իրականության մեջ ձևավորվում են մեխանիզմներ, ինստիտուտներ, որոնք հայ իրականության պատմության ընթացքում իրենց նախատիպը չեն ունեցել: Հայ հասարակությունը փոխառնում է այլ երկրի մոդելներ, որոնք պետք է

տեղայնացնի և հարմարեցնի իրեն: Այսպիսով, այսօր ստեղծվել է մի իրավիճակ, երբ մի կողմից չկան նախկինում գործառնող կառույցները, մյուս կողմից ձևավորվում են նոր մեխանիզմներն ու ինստիտուտները, որոնք խորթ են հայ հասարակության համար:

Տնտեսական ոլորտ

Հետխորհրդային երկրում նախ և առաջ փոխվել է տնտեսական համակարգը՝ անցում կատարելով ազատ շուկայական հարաբերություններին: Հայաստանի տնտեսական համակարգում կապիտալիստական մեխանիզմները դեռևս լիարժեք կերպով չեն ձևավորվել, դրանք գտնվում են կայացման փուլում: Փորձագետներից մեկը նշում է՝

«Կարծում եմ մենք դեռևս անցումային շրջանում ենք գտնվում, այսինքն՝ լիարժեքորեն շուկայական տնտեսության, կապիտալիստական հասարակարգին բնորոշ մեխանիզմներն ու ինստիտուտները վերջնականապես չեն ձևավորվել ու կայացել, բայց մյուս կողմից էլ ձերբազատվել ենք խորհրդային միությանը բնորոշ որոշակի ինստիտուտներից»:

(Տնտեսական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Մի կողմից տնտեսական համակարգը գտնվում է կայացման փուլում, իսկ մյուս կողմից հայ իրականության մեջ չկան նպաստավոր պայմաններ այդ մեխանիզմների լիարժեք գործառնման համար: Կապիտալիստական համակարգի հիմքում ընկած են ազատ շուկայական հարաբերությունները, որոնք ենթադրում են մրցակցության հնարավորություն: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ Հայաստանն իր տնտեսական համակարգով չի համապատասխանում կապիտալիստական համակարգի գաղափարախոսությանը, քանի որ ազատ շուկայական հարաբերությունները կրում են ձևական բնույթ: Տնտեսագետները հայ հասարակությունը բնորոշում են իբրև բևեռացված հասարակություն, որտեղ տնտեսական ռեսուրսների զգալի մասը գտնվում է անհատների ձեռքում, որոնք հասարակության փոքր տոկոսն են կազմում, իսկ հասարակության մեծամասնությունն ապրում է աղքատության մեջ: Սրա հիմնական պատճառներից այն է,

որ խոշոր ձեռնարկատիրությունները ճնշում և շուկայից դուրս են մղում փոքր և միջին բիզնեսը՝ այդպիսով զրկելով փոքր և միջին բիզնեսով զբաղվողներին եկամտից: Փորձագետները նշում են, որ այս իրավիճակի հիմնական պատճառը կառավարման համակարգն է, որը սուբյեկտիվ բնույթ է կրում: Անկախացումից հետո Հայաստանը հրաժարվել է խորհրդային տարիներին գործող տնտեսական համակարգից՝ որդեգրելով այլ սկզբունքներ, որոնք, սակայն, կրում են ձևական բնույթ և չեն իրականացվում կառավարման համակարգի սուբյեկտիվ մոտեցման հետևանքով:

«Պատճառը հետևյալն է. կառավարումը սուբյեկտիվ բնույթ է կրում, երկրում որոշում կայացնողները կա՛մ չեն տիրապետում տվյալ ոլորտին, կա՛մ եթե տիրապետում են, ապա մտահոգված չեն այդ ոլորտով, բոլոր որոշում կայացնողները կամ որոշում կայացնողների մեծամասնությունը հետապնդում են սուբյեկտիվ նպատակներ: Ըստ էության սրանք պատճառներ են, որ հասարակությունն անընդհատ աղքատանա, սա էլ բերում է բևեռացման»:

(Տնտեսական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Այսպիսով, փորձագետի վերոհիշյալ խոսքերից կարող ենք ենթադրել, որ այսօր հայ իրականության մեջ գործ ունենք կառավարման ոչ արդյունավետ համակարգի հետ, ինչը պայմանավորված է կադրային սխալ քաղաքականությամբ: Վերջինս դրսևորվում է նրանում, որ այս կամ այն պաշտոնը զբաղեցնող մարդը կա՛մ լիարժեք կերպով չի տիրապետում ոլորտին, կա՛մ անտարբեր վերաբերմունք է ցուցաբերում ոլորտի նկատմամբ՝ հետապնդելով անձնական շահը:

Կառավարման նման համակարգից բխում է նաև ներդրումների քաղաքա-կանության ձևավորման խնդիրը, որն ըստ փորձագետի կենսական նշանակություն ունի ցանկացած երկրի՝ այդ թվում նաև Հայաստանի տնտեսության զարգացման համար: Տնտեսագետը գտնում է, որ այսօր Հայաստանն ունի ներդրումների քաղց, իսկ ներդրումային քաղաքականությունը մեծ դեր ունի ավելի բարձր մակարդակում գործառնելու, որակապես նոր տնտեսություն և առաջընթաց ունենալու համար:

Փորձագետների կարծիքով հանրության համար այսօր խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ անկախացումից հետո մի շարք գործարաններ փակվեցին, ինչն իր հետևից բերեց բազմաթիվ խնդիրներ. գործարանների փակվելու արդյունքում տեղի է

ունեցել մի շարք մասնագիտությունների ակտուալության կորուստ: Սա իր հերթին հանգեցնում է գործազրկության աճին և աղքատության մակարդակի բարձրացմանը: Հայաստանը, չունենալով սեփական արտադրություն, ոչ միայն արտադրանք չի արտահանում, այլև ստիպված է ներկրել դրանք: Ստացվում է, որ Հայաստանը ոչ միայն գումար չի վաստակում, այլև ստիպված է ներկրած արտադրանքը վաճառել ավելի բարձր գնով, քան այն դեպքում, երբ տվյալ ապրանքը արտադրվեր երկրի ներսում: Միևնույն ժամանակ, փորձագետները նշում են, որ այսօր Հայաստանում տնտեսությունը զարգանում է մի ուղղությամբ, որը խորթ է հայ հասարակության համար.

«Տնտեսությունը սկսեց այլ ուղղությամբ զարգանալ. մենք ունենք սպասարկման տնտեսություն, առևտրի տնտեսություն, որի համար անհրաժեշտ է այլ հասարակական կառուցվածք, իսկ մեր հասարակությունը ստացել է բոլորովին այլ դաստիարակություն այլ հասարակարգի համար: Ֆիզիկոսը, ով նույնիսկ եթե ցածր էր վարձատրվում, իսկ այժմ ստիպված է աշխատել մատուցող կամ վարորդ, իրեն վատ է զգում և նոստալգիայով հիշում անցյալի մասին, երբ ինքն աշխատում էր իր մասնագիտությամբ»:

(Քաղաքական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Քաղաքական ոլորտ

Այսօր, Հայաստանում կայացման փուլում է գտնվում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական համակարգը: Ազատ մրցակցության սկզբունքը տարածվել է նաև քաղաքական ոլորտի վրա, որն իրենից ենթադրում է տարբեր կուսակցությունների առկայություն և դրանց միջև մրցակցության հնարավորություն: Փորձագետները, սակայն, նշում են, որ հայ իրականության մեջ չկան իրական գործառնող քաղաքական կուսակցություններ, իսկ վերջիններիս միջև պայքարը կրում է ոչ այնքան գաղափարական, որքան անձնական բնույթ: Կուսակցություններն ուղղված են հանրության խնդիրների լուծմանն ու առաջնորդությանը: Փորձագետները նշում են, որ մեր իրականության մեջ ոչ լիարժեք ձևավորված կառուցվածքի պայմաններում կուսակցությունների միջև մրցակցությունն ընթանում է անձնական, այլ ոչ թե ծրագրային մակարդակի վրա: Այս երևույթը վտանգավոր է հանրության համար,

քանի որ անտեսվում են վերջինիս շահերը և առաջ են մղվում կուսակցության անդամների՝ մասնավորապես ղեկավարների սուբյեկտիվ շահերը: Մասնագետները նշում են, որ այս իրավիճակն առավել խնդրահարույց է դառնում նոր սահմանադրության պայմաններում, որի արդյունավետ գործառնման պարտադիր նախապայման է հանդիսանում զարգացած կուսակցական համակարգը: Քաղաքագետը *նշում է.*

«…սահմանադրություն կա, արդեն նաև խորհրդարանական է, որը շատ տեղերում շատ լավ է աշխատում, բայց մի պայմանով, որ կան զարգացած քաղաքական կուսակցություններ: Ես այսպես կասեի. սահմանադրությունն, ընդհանրապես, մի բաժակ է, որի մեջ պետք է լցնել գինի, կամ թեյ, կամ ջուր: Բայց գինի չկա: Գինին կուսակցական համակարգն է: Որպեսզի քաղաքական համակարգն աշխատի, պետք են զարգացած քաղաքական կուսակցություններ, որոնք չկան: Հանրապետական կուսակցությունն իրենից ներկայացնում է պետական պաշտոնյաների արհմիություն, և նրանց հետ աֆիլացված բիզնես, իսկ մնացած քաղաքական կուսակցությունները իրենցից ներկայացնում են ակումբներ, որոշ միանգամյա ընտրական մեխանիզմեր յուրաքանչյուր ընտրություններին, այս կամ այն անձին սիրող ֆան-ակումբներ»:

(Քաղաքական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Կուսակցությունների գործունեության մեջ քաղաքագետները խնդրահարույց են համարում նաև այն հանգամանքը, որ կուսակցությունները «երևանյան» երևույթներ են. Երևանից դուրս գործող քաղաքական կուսակցություններ Հայաստանում գրեթե չկան: Ըստ էության, հայ իրականության մեջ չկա ձևավորված քաղաքական մշակույթ: Ըստ փորձագետների, դրա համար հարկավոր է հասարակության մասնակցություն քաղաքական կյանքին և քաղաքացիական գիտակցության բարձրացումը, որի ձևավորման համար ժամանակ է անհրաժեշտ: Առանց մասնակցության և քաղաքական մշակույթի ձևավորման ոչ մի սահմանադրություն չի կարող արդյունավետ գործառնել: Մասնագետները նշում են, որ սրա հետևանքն այն է, որ մեզ մոտ քաղաքականությունը էլիտաների կոնսենսուսի արդյունք է, այսինքն՝ իրենից ներկայացնում է մարդկանց փոքր խումբ, իսկ բնակչության մնացած հատվածը միանում է քաղաքական գործընթացին 5 տարին մեկ. ընտրությունների արանքում, մնացած 5 տարին, ՀՀ

քաղաքացու համար քաղաքականությանը մասնակցելու գործիքներ չկան: Ըստ փորձագետների այս իրավիճակը հանգեցնում է բևեռացման. հասարակությունն ընկալում է քաղաքականությունը՝ որպես ինչ-որ մեկի, այլ ոչ թե իր գործը:

Վերոհիշյալ խնդիրների հիմնական պատճառը կադրային սխալ քաղաքականությունն է, մասնավորապես իրավաքաղաքական ոլորտի փորձագետը մատնանշում է պրոտեկցիայի առկայությունը և դրա ոչնչացման անհրաժեշտությունը: Ըստ մասնագետի այսօր հայ իրականության մեջ (հատկապես կառավարման ոլորտում) առկա է խիստ պրոտեկցիա. իշխանության գլուխ կանգնած և կառավարման համակարգի մեջ ընդգրկված անհատներն իրենց շուրջ են հավաքում բարեկամներին, ծանոթներին: Այս երևույթն իր հետևից բերում է մի շարք հասարակական խնդիրներ. նեղանում է որոշումներ ընդունողների խումբը, փոքրանում է անաչառ որոշումներ կայացնելու հավանականությունը, նվազում է հասարակության վստահությունն իշխանության նկատմամբ: Մյուս կողմից, պրոտեկցիան իր մեջ ունի միևնույն իշխանական ուժերի պարբերաբար վերարտադրվելու վտանգ, քանի որ իշխանության ներկայացուցիչներն իրենց տեղն ամրապնդում են բարեկամական/ընկերական կապերի հաստատման միջոցով: Ըստ էության, այս երևույթն էլ հանդիսանում է իրական կուսակցությունների բացակայության, անձնային մակարդակի վրա պայքարի և քաղաքական ուժերի նկատմամբ հասարակության վստահության բացակայության պատճառ:

Քաղաքագետներն այս ոլորտում առանձնացնում են արտաքին քաղաքականության խնդիրը, որը բացասաբար է անդրադառնում հանրության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Այստեղ նշվում է Հայաստանի աշխարհագրական դիրքը և Լեռնային Ղարաբաղի չլուծված հարցը: Այս երկու հանգամանքները բերում են ներմուծված ապրանքների գնի բարձրացմանը, արտահանման փոքր տոկոսին, նեղ շուկային և ներդրումային քաղաքականության պասիվացմանը: Հայաստանն ունի այնպիսի աշխարհաքաղաքական դիրք, որի պարագայում արտահանման միակ շուկան դառնում է Ռուսաստանը, իսկ ներկրված ապրանքների գինը բարձրանում է: Մյուս կողմից, հայ հասարակությունն ունի Լեռնային Ղարաբաղի չկարգավորված հարցը, ինչը

ներդրողների համար ստեղծում է անվստահության և անկայունության մթնոլորտ ներդրումներ կատարելու, գործարաններ բացելու համար:

Տարածաշրջանային իրավիճակը բերում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հետևանքների: Հայաստանն իր քաղաքական վարքը դրսևորում է՝ ելնելով ոչ թե երկրի զարգացման հեռանկարներից, այլ կախված Ղարաբաղյան կոնֆլիկտի զարգացման դինամիկայից: Հայաստանն անդամակցում է այն միություններին, որոնց պետք է անդամակցել անվտանգության ապահովման, այլ ոչ թե տնտեսական զարգացման համար:

Գյուղատնտեսության ոլորտ

Այսօր Հայաստանը գտնվում է մի իրավիճակում, երբ աշխարհաքաղաքական դիրքի առումով բարդանում են ներկրման և արտահանման գործընթացները, երբ փոխվել է տնտեսական համակարգը, արտադրությունը, որը մեծ նշանակություն է ունեցել երկրի տնտեսության համար այսօր չի գործում: Նման պայմաններում հատկապես կարևորվում է գյուղատնտեսության ոլորտը: Փորձագետը նշում է, որ այստեղ առկա են մի շարք խնդիրներ, որոնց հիմնական պատճառը գյուղատնտեսության ոլորտի և մասնավորապես գյուղացու շահերը պաշտպանող հստակ օրենքների բացակայությունն է:

«…հողի սեփականաշնորհումից հետո որևէ օրենք հողի, գյուղմթերք արտադրողի մասին չի ընդունվել: Այսօր գյուղմթերք արտադրողն օրենքից դուրս մարդ է: Ամեն բնագավառի մասին օրենք կա բացի գյուղատնտեսական մթերք արտադրողի մասին օրենքից: Այստեղ գինեգործների, պահածոյագործների տարբեր լոբբիստներ կան, որոնց ձեռք է տալիս այսօր գյուղացուն այս վիճակում պահել: Տեսեք, խաղողի գումարը տարիներով չեն տալիս, բանջարեղենի գումարը տարիներով չեն տալիս, որովհետև գյուղացին այս վիճակով պաշտպանված չէ: Այսինքն՝ հեշտ է թալանել գյուղացուն. կաթը վերցնել կոպեկներով, ցորենը վերցնել կոպեկներով: Մի կողմը պետության կողմից վստահված անձ է, որը օրենքով պաշտպանված է, մյուս կողմն էլ մի մարդ է, որը որ իր օրենքը չունի»:

(Գյուղատնտեսության ոլորտի փորձագետ, արական սեռ)

Ստացվում է, որ գյուղացիները գտնվում են խոցելի վիճակում, ինչը, փորձագետների համոզմամբ, շահավետ իրավիճակ է խոշոր ձեռներեցների համար: Սա, սակայն, հանգեցրել է նրան, որ հողերի մոտ 80%-ը չի մշակվում գյուղացու կողմից, այլ տրվում է վարձակալության: Այսպիսով, գյուղացին, չունենալով բավարար չափով եկամուտ, դիմում է արտագաղթի: Մյուս կողմից, փորձագետները նշում են, որ գյուղացիները ստիպված են օգտագործել 30 ու ավելի տարի վաղեմություն ունեցող գյուղտեխնիկա, քանի որ նորը գնելու բավարար միջոց չունեն: Միևնույն ժամանակ, խնդրահարույց է սուբսիդիաների հարցը, քանի որ ձևավորվել է մի վիճակ, երբ սուբսիդիաները ստանում են ոչ թե գյուղացիները, այլ բանկերը: Սուբսիդիաները գալիս են պետական բյուջեից, սակայն արդյունքում այդ գումարները գնում են բանկերին, այլ ոչ թե ծառայում են գյուղացուն: Այս խնդիրները, ըստ փորձագետի, ունեն մեկ հիմնական պատճառ՝ օրենսդրական դաշտը, իսկ ավելի հստակ՝ օրենքների բացակայությունը: Գյուղատնտեսության ոլորտին վերաբերող հստակ օրենքները միայն կարող են վերահսկել, որ գյուղացիներին պետական բյուջեից հատկացվող գումարը հասնի գյուղացուն:

Փորձագետները անդրադառնում են նաև գյուղացիների տեղեկացվածության խնդրին: Ըստ մասնագետների այսօր ոչ բոլոր գյուղացիներն են, որ ունեն հասանելիություն համացանցին, որտեղից կարող են տեղեկատվություն ստանալ գյուղատնտեսության ոլորտի հետ կապված իրենց հուզող հարցերի մասին: Այս տեսանկյունից կարևորվում է հեռուստատեսության դերը, որն առավել հասանելի և դիտվող է գյուղացիների կողմից և որը, սակայն, չունի հաղորդումների մշակված շարք՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտին:

Իրավական ոլորտ

Անդրադառնալով օրենսդրական դաշտին՝ պետք է նշել, որ այստեղ խնդիրները միայն գյուղատնտեսության ոլորտին չէ, որ վերաբերում են, այլ, փորձագետների պնդմամբ, իրավական դաշտն ամբողջությամբ բարեփոխումների կարիք ունի: Նոր հասարակարգի պայմաններում, երբ Հայաստանը որդեգրել է ժողովրդավարական

պետության սկզբունքը, մենք ունենք իրավական պետության կայացման խնդիր: Վերջինիս հիմքում ընկած է անկախ դատական համակարգը:

«Երկրորդ հարցը, որն ամենակարևորն է Հայաստանի համար, օրինականության խնդիրն է, իրավական պետության հասկացությունը: Խոսքս դատարանի անկախության մասին է, որովհետև ես համարում եմ դատական համակարգը պետության ողնաշարը. եթե ունես դատական անկախ համակարգ, ապա դա խթան է հանդիսանում ոչ միայն մարդկանց իրավունքների պաշտպանության, այլև տնտեսության մեջ մրցակցության ապահովման ու տնտեսության զարգացման համար»:

(Իրավական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Փորձագետները գտնում են, որ անկախ դատական համակարգի կայացումը կարևոր հանրային խնդիր է, քանի որ թույլ է տալիս լիարժեքորեն ապահովել այն բոլոր սկզբունքները, որոնք այսօր հռչակված են Հայաստանում, մասնավորապես, խոսքը տնտեսության մեջ ազատ մրցակցության, մենիշխանության վերացման, քաղաքական ոլորտում կուսակցությունների ձևավորման, ընտրությունների թափանցիկության ապահովման մասին է: Ըստ էության, մենք այսօր ունենք հռչակված մի շարք սկզբունքներ, իրականացված և իրականացվող մի շարք ծրագրեր, որոնք պետք է ապահովեն իրավական պետության ձևավորումը: Այստեղ, ըստ իրավապաշտպանի, լուրջ խնդիր կա, քանի որ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող մի շարք ծրագրեր ընդունվում են, պետությունը ստանում է ֆինանսական աջակցություն, սակայն իրականում անտեսում է ծրագրերում առկա սկզբունքները: Սրա պատճառն այն է, որ դատական համակարգի իրական անկախացումն իր մեջ վտանգ է պարունակում՝ ուղղված առկա իշխանությունների դիրքերի խարխլմանը: Ստացվում է, որ հայ հասարակությունն ունի ժողովրդավարության հռչակված սկզբունքներ, ավելին՝ մի շարք միջազգային ծրագրեր աջակցում են դրանց ներդրմանն ու ամրապնդմանը Հայաստանում, սակայն ըստ փորձագետների այս ամբողջը կրում է ձևական բնույթ: Արդյունքում ստացվում է, որ գործնականում հայ հասարակությունը չունի անկախ դատարան, որը կարող է լուծել հանրային մի շարք խնդիրներ: Այս իրավիճակի կարգավորողները մի կողմից իշխանությունն է, որը չի նախաձեռնում ոչ

մի փոփոխություն՝ ելնելով սեփական շահերից, իսկ մյուս կողմից հասարակությունն է, որն այսօր չի առաջադրում հասարակական պահանջ: Այստեղ փորձագետները հատուկ անդրադարձ են կատարում մտավորականների խմբին: Ըստ մասնագետների, մտավորականներն իրենցից ներկայացնում են այնպիսի ուժ, որը կարող է, իշխանության վրա ճնշում գործադրելով, ստիպել իսկապես ընդունել ժողովրդավարության սկզբունքները և ունենալ իրավական պետություն: Այստեղ բախվում ենք հայ հասարակությանը բնորոշ «հարմարվողականության սինդրոմին», որը հատուկ է նաև մտավորականներին: Միևնույն ժամանակ, մտավորականները նույնպես զգում են իրենց դիրքերի սասանման վտանգը: Սա է պատճառը, որ այս խումբը նույնպես ձեռնամուխ չի լինում իրավիճակի փոփոխության համար: Իրավապաշտպանը գտնում է, որ որոշ բարեփոխումներ կարող են հանգեցնել մտավորականների «կոչումազրկմանը»:

Հասարակության մասին խոսելիս՝ փորձագետները շեշտադրում են կրթական համակարգի խնդիրը: Այսօրվա կրթական համակարգը կառուցված է այնպես, որ երեխաներին սովորեցնում են միայն սերտել դասը, իսկ ստեղծագործական, քննադատական մտքի զարգացումն ու մտածելու ունակությունն անտեսվում են: Արդյունքում, մենք ունենք ցածր իրավագիտակցությամբ և մտածելու ունակության բացակայությամբ հասարակություն, որն այնքան հզոր չէ, որ ճնշում գործադրի իշխանության վրա այս կամ այն սկզբունքներն ընդունելու համար: Իրավագիտակցության բարձրացման գործում մասնագետը կարևորում է երկու գործոն՝ կրթությունն ու հեռուստատեսությունը: Վերջինս, մեծ դեր է կատարում հանրության գիտակցության ձևավորման վրա: Իրավապաշտպանը հատկապես շեշտադրում է Հանրային հեռուստատեսության դերն այս հարցում:

«Հանրային բանավեճ է պետք, Հանրային հեռուստաընկերությունը պետք է իսկապես ծառայի հանրային շահերին, այլ ոչ թե լինի իշխանական խոսափողը. ես հատուկ եմ նշում Հանրայինը, որովհետև, չնայած տեղեկատվության բազմազանությանը, հիմնական դերը ստանձնում է հեռուստատեսությունը, բայց ես հատկապես նշում եմ Հանրայինը, որովհետև եթե Հանրային հեռուստաընկերությունն ազատ լինի, մյուս հեռուստաալիքները կհետևեն նրան»:

(Իրավական ոլորտի փորձագետ, արական սեռ)

Հեռուստատեսությամբ հանրային բանավեճերի առկայությունը կարող է նպաստել հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը: Այստեղ փորձագետների կողմից կարևորվում է հեռուստատեսությունը՝ որպես առավել ազդեցիկ գործոն, և մասնավորապես Հանրային հեռուստաալիքը, որը կոչված է ծառա-յելու հանրության շահերին: Այսօր անկախ ԶԼՄ-ների առկայությունը, որոնք կարող են բարձրաձայնել հանրությանը հուզող այս կամ այն խնդիրը մասնագետների կողմից գնահատվում են իբրև դրական փոփոխություն: Միևնույն ժամանակ, պետա-կան ապարատի ճնշումը շարունակում է գործել, իսկ մարդկանց ակտիվությունը բավարար մակարդակի վրա չէ, որպեսզի կարողանա դիմադրել պետական ապարատի ճնշմանը: Սա է պատճառը, որ հասարակության ըմբոստությունները հիմնականում հաջողություն չեն ունենում: Այստեղ կրկին հանգում ենք իրավագի-տակցության բարձրացման խնդրին:

ՀԿ ոլորտ

Այսօր հայ հասարակության մեջ միջազգային ծրագրերի ներմուծման և ժողովրդավարական որոշ արժեքների որդեգրման արդյունքում ակտիվ կերպով գործառնում են հասարակական կազմակերպությունները, որոնք վերջին ժամանա-կահատվածում հանրային խնդիրների բարձրաձայնման և կարգավորման գործընթացներում մեծ դեր ունեն: Ըստ փորձագետների, այս ոլորտում այսօր անհասկանալի և հանրության համար վտանգավոր մի իրավիճակ է տիրում: Հասարակական դաշ-տում մեծացել է հասարակական կազմակերպությունների քանակը, և դրանցից որոշ-ները ստեղծված են հատուկ նպատակներով: Ամենամեծ վտանգն ըստ մասնա-գետների այն է, որ այդ կազմակերպություններն ունեն անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ՝ առավել գրավիչ գործելու համար: Սա նրանց գործունեութ-յունը դարձնում է ավելի ազդեցիկ և ընդգրկում է ավելի շատ անհատներ: Այս ոլոր-տում փորձագետները նկատում են իշխանության և հասարակության շահերի բախում.

«Հանրությունը խնդիր է դնում, իսկ մենք՝ որպես հասարակական կազմակերպություն, արձագանքում ենք, ընդհանրապես դա այդպես է, իսկ այստեղ այդպես չէ: Նման կոնֆլիկտ ու շահերի բախում կա այս դաշտում: Նրանք ասելով՝ նկատի ունեմ իշխանություններին և իշխանությունների հետ սերտ կապված հարուստ բիզնեսը: Պատճառն այն է, որ հասարակական դաշտը մեզ մոտ բավականին ակտիվ է, և այդ ակտիվ հասարակական դաշտը ինչ-որ ձևով պետք է կառավարել: Այդ կառավարելն այսպես է ստացվում, ոչ թե ուղղակիորեն»:

(ՀԿ ոլորտի փորձագետ, իգական սեռ)

Փորձագետի այս խոսքերից կարելի է հասկանալ վերջինիս անհանգստությունը հասարակական դաշտ իշխանությունների ներխուժմամբ: Փորձագետը տարանջատում է հասարակությունն ու իշխանությունը՝ պնդելով, որ այս երկուսը պարտադիր չէ, որ ունենան միմյանց հակասող շահեր, սակայն նրանց շահերը չեն կարող համընկնել, քանի որ հասարակությունն ունի իր առանձին խնդիրները, որը լուծելու համար են ստեղծվել հասարակական կազմակերպությունները: Վերջիններս ակտիվ են հանրությանը հուզող խնդիրների բարձրաձայնման և շահերի պաշտպանության գործընթացում: Սա իր հերթին վտանգ է ներկայացնում իշխանությունների զբաղեցրած դիրքերի համար: Ըստ փորձագետների՝ կառավարության մոտ առաջանում է այս ոլորտի վերահսկման և ուղղորդման անհրաժեշտություն, որը նրանք անում են իմիտացիոն հասարակական կազմակերպություններ ստեղծելով: Դրանք ուղղված են ոչ թե հանրության խնդիրները բարձրաձայնելուն և լուծելուն, այլ հանրությանը իշխանությունների համար ցանկալի ուղղությամբ ուղղորդելուն:

Կրթության ոլորտ

Կրթության ոլորտի փորձագետների կողմից առանձնացվում են կրթական համակարգի մի շարք խնդիրներ, որոնք սկսում են դպրոցից և ունեն շրջանաձև բնույթ: Խորհրդային միության փլուզումից հետո մի շարք մասնագետներ, չգտնելով իրենց տեղը նոր հասարակարգում, հեռացան երկրից: Արդյունքում, այն սոցիալական և մշակութային կապիտալը, որի միջոցով պետք է կրթվեր նոր սերունդը, արտագաղթեց: Ձևավորվեց մասնագետների մի նոր շերտ, որն իր ունակություններով

զիջում էր նախորդներին: Այդ մասնագետներից որոշները նույնպես դիմեցին արտագաղթին: Իրենցից հետո եկած սերունդն ավելի թույլ է: Ըստ էության, այսօր Հայաստանում ստեղծվել է մի իրավիճակ, երբ չկա մասնագետների պաշար, որոնց սաները կարող են սովորել և սերնդեսերունդ փոխանցել գիտելիքը և մշակույթը: Արդյունքում, ամեն հաջորդող սերունդ կրթության ավելի ցածր մակարդակ է ունենում, ինչն էլ պայմանավորված է մասնագիտական կապիտալի բացակայությամբ: Ստեղծվել է մի իրավիճակ, որը փորձագետներն անվանում են «վակուում», որը գործում է հետևյալ կերպ. լավ մասնագետները հեռացել են, նոր սերունդը չունի ուսուցիչ, դասախոս, ով կուսուցանի իրեն, հետևաբար համալսարաններից դուրս են գալիս նախորդ սերնդից որակով ավելի ցածր մասնագետներ, որոնք իրենց հերթին պետք է կրթեն հաջորդ սերունդը:

Կրթական համակարգի խնդիրների հիմնական պատճառ փորձագետները համարում են համակարգային մոտեցման և ռազմավարական պլանավորման բացակայությունը: Այսօր Հայաստանում առկա է կրթության ռազմավարական երկարատև և հեռանկարային պլանավորման բաց, ինչի հետևանքով կրթական համակարգը չի գործառնում իբրև համակարգ: Պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ՝ առանց հաշվի առնելու հասարակության առանձնահատկությունները և բովանդակային համապատասխանությունը: Փորձագետներից մեկը հետևյալ կերպ է նկարագրում Հայաստանի կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները.

«… համակարգը որպես համակարգ չի գործում, ինքը տարերային: Մենք քայլում ենք, մեր մարմինը մեր ոտքերն առաջ են շարժվում, այստեղ կարծես մի ոտքը միշտ հետ է մնում, կարծես մեկը միշտ առաջ է գնում, մի ծրագիր է գալիս, մի բարեփոխում, բայց միևնույնն է, այդ մի ոտքը պատրաստ չէ քեզ տանելու»:

(Կրթության ոլորտի փորձագետ, իգական սեռ)

Խոսելով մասնավոր և հատուկ ուղղվածություն ունեցող դպրոցների մասին՝ փորձագետը նշում է, որ սրանք ձեռքբերումներ են, սակայն մասնավոր, այլ ոչ թե ուղղորդված պետական ռազմավարությամբ նախատեսված և կարգավորվող: Վերջինիս բացակայությունը, ըստ փորձագետի պայմանավորված է կրթական համակարգի քաղաքականացված լինելով, ինչն էլ պայմանավորում է նախարարի ընտրությունը:

Ըստ էության, նախարարների ընտրությունը հաճախ պայմանավորված է լինում քաղաքական դաշտում առկա գործընթացներով, և արդյունքում նախարար դարձած անձը վստահ չէ՝ քանի տարի է զբաղեցնելու այդ պաշտոնը, հետևաբար, հեռանկարային ռազմավարական պլան չի նախագծում: Արդյունքում ստացվում է, որ յուրաքանչյուր նախարար իր բարեփոխումներն է բերում, որոնք ունեն սկիզբ, սակայն չունեն հստակ ընթացք և հեռանկար: Այսպես, օրինակ, միջնակարգ դպրոցը դարձավ 12-ամյա, սակայն ընթացքում պարզվեց, որ ծրագիրը վերջնական մշակված չէ և հայ իրականությանը հարմարացնելու կարիք ունի: Մասնագետը գտնում է, որ այս իրավիճակից դուրս գալու համար հարկավոր է նախ և առաջ ունենալ հստակ կրթության պլանավորում և գումարի ներդրում կրթության ոլորտում: Այսօր, վերջինիս տիրույթում ստեղծված վակուումի հետևանքով մենք գրեթե չունենք մասնագետներ, ովքեր կարող են կրթել, ումից կարող է սովորել նոր սերունդը: Ըստ էության, Հայաստանն ունի գիտական ներուժ, սակայն ուղեղների արտահոսքի հետևանքով, որը սկսել է դեռևս 90-ական թվականներից, վերջինս հիմնականում գտնվում է երկրի սահմաններից դուրս: Այս իրավիճակից դուրս գալու համար փորձագետներն առաջարկում են ռազմավարության մշակում, որի արդյունքում արտասահմանյան մասնագետներ կհրավիրվեն դասավանդելու, ինչպես նաև առաջարկվում է պետական քաղաքականության մշակում, որն ուղղված կլինի հայ ուսանողներին արտասահմանում սովորելու հնարավորության ընձեռմանը: Վերջինս թույլ կտա մի քանի տարում ունենալ մասնագետներ, ովքեր իրենց ձեռք բերած գիտելիքը կկարողանան փոխանցել եկող սերունդներին:

Կրթական համակարգի մեկ այլ խնդիր է մասնագիտական կողմնորոշումը, որը նույնպես բխում է ռազմավարական հստակ մոտեցման բացակայությունից: Ոլորտի մեկ այլ փորձագետ նշում է.

«Բուհական լուրջ խնդիր ունենք. մի քիչ հոգեբանական է, բայց նաև մեր բուհերի պատասխանատուների շնորհիվ է, որ մարդիկ կրթություն են ստանում և ինքնանպատակ, չի ուղղորդվում դիմորդը, թե ինչ մասնագետ է դառնալու: Այսինքն, հասարակ օրինակ եմ Ձեզ բերում. տարիներ շարունակ արդեն իրավաբանական ֆակուլտետում չկա պետպատվեր, այսինքն՝ պետությունը բացահայտ ասում է, որ

ինքը իրավաբանի կարիք չունի, բայց Իրավաբանականի վարձն է ամենաբարձրը, և դիմորդների քանակն է ամենաշատը»:

(Կրթության ոլորտի փորձագետ, արական սեռ)

Մասնագետի այս խոսքերը վկայում են այն մասին, որ հասարակությունն ընտրում է մասնագիտությունը՝ հաշվի չառնելով աշխատաշուկայում առկա պահանջարկը: Մասնագիտության ընտրության հարցում մարդիկ առավելապես կողմնորոշվում են հասարակության մեջ տվյալ մասնագիտության հեղինակությունից, այլ ոչ թե հետագայում աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու հնարավորությունից: Փորձագետները գտնում են, որ մասնագիտական կողմնորոշումը պետք է իրականացվի դեռևս դպրոցական տարիներից սկսած՝ երեխաներին հստակ առարկաներ ուսուցանելով և որոշակի կերպով այդ առարկաների հանդեպ սեր սերմանելով: Սա պետք է լինի հստակ մշակված քաղաքականություն, որը պետք է հիմնվի աշխատաշուկայի պահանջարկի վրա:

Բնապահպանական ոլորտ

Հանրային կարևոր նշանակություն ունեցող բնագավառներից է հանդիսանում բնապահպանությունն ու էկոլոգիական համակարգը: Չնայած վերջինիս կարևորությանը հասարակության բացառապես բոլոր անդամների համար՝ ոլորտի մասնագետների պնդմամբ հանրության անդամները, ինչպես նաև կառավարության ներկայացուցիչները չեն գիտակցում և չեն ընդունում էկոլոգիական և բնապահպանական խնդիրների կարևորությունը: Այսօր ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում առկա են բնապահպանական և էկոլոգիական լուրջ խնդիրներ, սակայն Հայաստանում դա կրում է ավելի սուր բնույթ: Հանրային բոլոր խնդիրների պատճառն, ըստ փորձագետների, հասարակության բևեռացման մակարդակի բարձրացումն է: Ըստ էության, երկրի բարեկեցությունը չափվում է հասարակութան միջին խավի առկայությամբ և համամասնությամբ. ավելին՝ միջին խավը հանդիսանում է երկրի կայուն զարգացման հիմքը: Հայ իրականության մեջ միջին խավը շատ փոքր տոկոս է կազմում, ինչն էլ, ըստ փորձագետների հանգեցնում է մի շարք խնդիրների, այդ թվում նաև բնապահպանական և էկոլոգիական: Մի շարք ոլորտներում

ձևավորված մենիշխանությունը հանգեցնում է անհատական շահերի պաշտպանությանը, ինչն էլ դրսևորվում է բնության շահագործմամբ և դրա հանդեպ հանդուրժող վերաբերմունքով: Բնական պաշարները շահագործվում են հասարակության մի խմբի կողմից՝ վնաս հասցնելով երկրի էկոլոգիական համակարգին: Ըստ բնապահպանի, Հայաստանն այսօր գտնվում է վայրի կապիտալիզմի փուլում, երբ բնությունը ենթարկվում է շահագործման մի խումբ մարդկանց կողմից:

Փորձագետները էկոլոգիական խնդիրների շարքում առանձնացնում են նաև Երևանի քաղաքաշինությունը: Այստեղ առկա է երկու խնդիր՝ սեյսմիկ կայունությունն ու էկոլոգիական ռիսկերի աճը: Այսօրվա քաղաքաշինությունն անտեսում է սեյսմիկ կայունության սկզբունքները՝ ստեղծելով վտանգավոր միջավայր հանրության համար: Միևնույն ժամանակ, քաղաքաշինությունն անտեսում է կանաչապատման կարևորությունը՝ ավելացնելով էկոլոգիական ռիսկերը: Փորձագետները նշում են, որ քաղաքաշինության այս մոտեցումը Երևանը վերածում է «ասֆալտե-բետոնե» անապատի:

Ըստ մասնագետների, այս բոլոր խնդիրները վտանգավոր են հանրության համար, քանի որ ծնում են հիվանդ հասարակություն: Այստեղ հարկավոր է Բնապահպանության և Առողջապահության նախարարությունների սերտ համագործակցություն, ինչն այսօր չի իրականացվում Հայաստանում, իսկ Բնապահպանության նախարարության դերը որոշումների կայացման գործում փոքր է: Հայ իրականության մեջ չկա ձևավորված բնապահպանության կարևորության մշակույթ, ինչն էլ պայմանավորված է տեղեկացվածության ցածր մակարդակով: Ստացվում է, որ հասարակությունն ինքն էլ չի գիտակցում էկոլոգիական ռիսկերի առկայությունը, հետևաբար, չի կարող լինել պահանջատեր այս հարցում: Փորձագետները նշում են, որ այստեղ հարկավոր է կրթական համակարգի հետ համագործակցությունն ավելացնել և այդ մշակույթը մարդկանց մեջ ձևավորվել դեռևս դպրոցական տարիներից: Միևնույն ժամանակ, մասնագետները կարևորում են հեռուստատեսության դերն այս հարցում:

«Հեռուստատեսությունը շատ մեծ ուժ է և այդ առումով թերանում է հեռուստատեսությունը: Այդ առումով «Ար»-ն է բավականին հետաքրքիր

հաղորդումներ տալիս, բայց դրանք դրվագային են, իսկ դա պետք է լինի հիմնարար շարք»:

(Բնապահպանական ոլորտի փորձագետ, իգական սեռ)

Բնապահպանը գտնում է, որ հեռուստատեսությունը մեծ ազդեցություն ունի հանրության վրա, և այդ իսկ պատճառով էկոլոգիական և բնապահպանական խնդիրների մասին բարձրաձայնող և ուսուցանող հաղորդումների ցուցադրությունը կնպաստի հասարակության գիտակցության բարձրացմանը:

Այսօր ինչպես մի շարք ոլորտներում, բնապահպանության ոլորտում նույնպես իրականացվում են տարբեր միջազգային ծրագրեր: Դրանցից որոշները փորձագետը գնահատում է արդյունավետ, սակայն այստեղ ևս կա մի խնդիր: Ծրագրերը հիմնականում պիլոտային բնույթ են կրում և շարունակական չեն լինում: Այս տեսանկյունից մասնագետները կարևորում է այդ ծրագրերի արդյունքների տարածումը հանրության լայն շրջանակներում:

Հանրային խնդիրների առաջացման և լուծման պատասխանատուների դուրսբերում

Փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում դուրս են բերվել հանրային խնդիրների առաջացման, ինչպես նաև դրանց լուծման համար պատասխանատուները: Այս դեպքում փորձագետների կողմից նկատվում է խնդիրների պատասխանատուների և լուծողների դերակատարների տարբերակում. իբրև խնդիրների համար պատասխանատվություն կրող սուբյեկտ ընկալվում է իշխանությունը/կառավարությունը: Փորձագետներից մեկը նշում է.

«Եթե կառավարումը և իշխանությունը չունենային այդպիսի կարևորագույն դերակատարություն, ապա մենք ինչի՞ համար ենք առանձնացնում մի խավ, որին մեր գումարներով պահում ենք: Եթե հասարակությունը պետք է ինքնին կառավարվի, դե թո՛ղ չունենանք մենք այդ օղակները, որոնք որ այսօր բավականին մեծ տոկոս են կազմում...»

(Իրավաքաղաքական ոլորտի փորձագետ, իգական սեռ)

Հասարակական կառույցների ոլորտում մասնագիտացված փորձագետը նույնպես նշում է կառավարության պատասխանատվության մասին.

«Պարզ է, որ կառավարությունը, իշխանությունը, ով որ վերցրել է այդ գործընթացն իր ձեռքը, ովքեր որոշում ընդունող մարդիկ են, ով ստորագրության իրավունք ունի և որոշում է ընդունում: Առաջին հերթին դա կառավարությունն է, իշխանությունն է: Հիմա հասարակությունից շատ բան է պահանջվում, ասում են «ինչո՞ւ դուք այսպես չեք անում, այնպես չեք անում»: Հասարակությունը ոչ մի բան չպետք է անի, ինքը պատասխանատվություն չի կրում, ինքը որոշում ընդունող չէ, և դա պետք է հասկանալ: Հասարակությունը կարող է պատասխանատվություն կրել իր գործունեության համար, բայց ոչ թե այն բանի համար, որ կառավարությունը պետք է աներ»:

(ՀԿ ոլորտի փորձագետ, իգական սեռ)

Փորձագետի այս խոսքերից կարող ենք հասկանալ, որ իր կարծիքով բոլոր խնդիրների համար պատասխանատու է իշխանությունը, իսկ հասարակությունն ավելի պասիվ կարգավիճակում է, քանի որ չունի որոշումներ կայացնելու, այս կամ այս փաստաթուղթ ստորագրելու լիազորություն և իրավասություն: Ըստ փորձագետի, հասարակությունը կարող է միայն բարձրաձայնել իրեն հուզող նեղ խնդիրներ, որոնց լուծման համար էլ ստեղծված են հասարակական կազմակերպությունները: Ըստ էության, հասարակությունը չի կարող կրել պատասխանատվություն մի շարք հանրային խնդիրների առաջացման համար նաև այն պարզ պատճառով, որ այսօր հայ հասարակությունն ունի իրավագիտակցության և հանրային ոլորտի մի շարք խնդիրների մասին տեղեկատվության սակավություն:

Փորձագետների այս դիրքորոշումները համեմատելով 2016թ. նոյեմբերին «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի» կողմից իրականացված «ՀՀ կառավարության գործունեության գնահատականները, քաղաքական կուսակցություններից ակնկալիքները. հայկական հեռուստաալիքները որպես կառավարության գործունեության լուսաբանման գործիք» հետազոտության արդյունքների հետ՝ կարող ենք նկատել, որ այս դեպքում փորձագետների և

հասարակության դիրքորոշումը հանրային խնդիրների պատասխանատուների հարցում համընկնում է: Ըստ հետազոտության տվյալների, հասարակության 75%-ն իր կողմից առանձնացրած կարևորագույն հանրային խնդրի պատասխանատու տեսնում է իշխանություններին/կառավարությանը:

Ի տարբերություն խնդիրների առաջացման համար պատասխանատուների, ով, ըստ փորձագետների, հանդիսանում է իշխանությունը, խնդիրների լուծման պատասխանատուներ կարող են հանդես գալ տարբեր ագենտներ: Այստեղ կարևորվում է հասարակության և կառավարության համագործակցությունը: Ըստ էության, իշխանությունն ընդունում է որոշումներ, սակայն դրանք կյանքի կոչելու համար հարկավոր է արդեն հասարակության ներգրավվածությունը և իրենց պարտականությունների կատարումը: Փորձագետը նշում է, որ խնդիրների լուծման առաջին քայլերը պետք է կատարի իշխանությունը՝ գործադիր, օրենսդիր և դատական մարմինների միջոցով: Երբ այս քայլերն արդեն նախաձեռնված են, իր մեծ դերակատարումն ունենում է նաև հասարակությունը, ով պետք է ընդունի փոփոխությունները և դրանք կյանքի կոչի: Հատկանշական է, որ փորձագետների կողմից որևէ կերպ անդրադարձ չի կատարվում կուսակցությունների դերին խնդիրների լուծման գործընթացում: Նման պատկեր է նաև հասարակության դեպքում, ովքեր ակնկալիքներ չունեն կուսակցություններից և որևէ կերպ չեն ասոցացնում խնդիրների լուծման հետ:1 Հանրային խնդիրների լուծման համար փորձագետի կողմից առանձնահատուկ դեր է հատկացվում նաև հասարակական կազմակերպություններին, որոնք կոչված են լուծելու հենց հասարակության կողմից բարձրաձայնած խնդիրները: Դրանք դիտարկվում են իբրև հասարակությանը հուզող և բարձրաձայնված այս կամ այն խնդրի լուծման համար ուղղորդող ագենտներ: Դատաիրավական ոլորտի փորձագետը հանրային խնդիրների լուծման գործընթացում կարևորում է հատկապես դատական համակարգի դերը, որն իրենից անկախ իշխանություն է ներկայացնում:

[1]Տե՛ս «ՀՀ կառավարության գործունեության գնահատականները, քաղաքական կուսակցություններից ակնկալիքները.Հայկական հեռուստաալիքները որպես կառավարության գործունեության լուսաբանման գործիք», 2016 թ. նոյմեբեր

Հանրային հեռուստաընկերության հաղորդաշարերի մեջ հանրային խնդիրների ներկայացվածության ուսումնասիրություն

Փորձագետների հետ հարցազրույցների արդյունքում տարբեր ոլորտներից դուրս են բերվել մի շարք հանրային խնդիրներ, մասնավորապես՝ ոչ լիարժեք ձևավորված տնտեսական համակարգը, քաղաքական ոլորտում պրոտեկցիայի առկայությունը, օրենսդրական դաշտի բացերը, կրթական համակարգի վակուումային վիճակը, իմիտացիոն հասարակական կազմակերպությունների առկայությունը, քաղաքաշինության հիմնահարցերը և այլն: Վերջիններս համադրելով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի» կողմից 2016թ.-ին իրականացված հետազոտության» արդյունքների հետ՝ կարող ենք ասել, որ հասարակության անդամներն ու փորձագետներն ըստ էության խոսում են նույն խնդիրների մասին, սակայն հասարակությունն առավել շատ է շեշտադրում այն խնդիրները, որոնք փորձագետները դիտարկում են իբրև մի շարք այլ խորքային հանրային խնդիրների արդյունք: Այսպես, զանգվածային հարցման արդյունքում կարող ենք առանձնացնել այն երեք ամենահաճախ նշված խնդիրները, որոնք հասարակության կողմից դիտարկվել են իբրև հանրային կարևորություն ունեցող խնդիրներ՝ գործազրկությունը (25%), արտագաղթը (13%) և սոցիալ-տնտեսական պայմանները (12%): Ըստ էության, փորձագետները ևս անդրադառնում են այդ խնդիրներին, սակայն դրանք համարում են իրենց կողմից առանձնացված վերոնշյալ խնդիրների առկայության հետևանք: Առաջնային հանրային խնդիրներ փորձագետների կողմից դիտարկվում են նոր համակարգի, կառուցվածքների և ինստիտուտների ձևավորումը, օրենսդրական դաշտի բարեփոխումները, գյուղատնտեսության ոլորտում օրենքների բացը, պրոտեկցիայի առկայությունը, կադրային սխալ քաղաքականությունը, որոնք հանգեցնում են իշխանության նկատմամբ վստահության և հասարակության մոտ հեռանկարային պլանների բացակայությանը, հուսահատվածությանը, որոնք էլ բերում են հասարակության կողմից նշված խնդիրներին՝ արտագաղթի, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, գործազրկությանը:

Հանրային խնդիրների մասին խոսելիս՝ որոշ փորձագետներ շեշտադրել են հեռուստատեսության և մասնավորապես Հանրային հեռուստաընկերության կարևորությունը նշված հանրային խնդիրների բարձրաձայնման գործընթացում: Հաշվի առնելով փորձագետների և հասարակության կողմից առանձնացված հանրային մի շարք խնդիրները, ինչպես նաև փորձագետների կողմից Հանրային հեռուստատեսության գործունեության կարևորությունը այդ խնդիրների բարձրաձայնման գործընթացում՝ հարկավոր է ուսումնասիրել Առաջին ալիքի եթերացանկը՝ պարզելու համար վերջինիս կառուցման սկզբունքները և առանձնացված հանրային կարևորություն ունեցող խնդիրների ներկայացվածությունը:

Հանրային հեռուստաալիքի եթերացանկի բովանդակային վերլուծության արդյունքում դուրս են բերվել երեք հիմնական հաղորդաշար, որոնց շրջանակներում անդրադարձ է կատարվում հանրային խնդիրներին: Դրանք են՝ «Մասնագիտությունը՝ լրագրող», «Հրապարակում» և «Առավոտ լուսո» հաղոր-դաշարերը: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

«Մասնագիտությունը՝ լրագրող» հաղորդաշարը ցուցադրվում է շաբաթական երկու անգամ (երեքշաբթի և ուրբաթ)՝ 30 րոպե տևողությամբ: Հաղորդաշարի նպատակը սահմանվում է հետևյալ կերպ. *«Հաղորդաշարը վեր է հանում հասարակության սուր խնդիրները: Բարդ սոցիալական հարցերի վերաբերյալ լրագրողական լուրջ ու մանրակրկիտ հետաքննությունները հնարավորություն են տալիս հասկանալ իրականությունն ու խնդրին նայել բազմակողմանի».*[2] Նշված սահմանումից պարզ է դառնում, որ հաղորդումն ուղղված է հանրային խնդիրների վերհանմանն ու դրանց ուսումնասիրությանը: Բովանդակային վերլուծության են ենթարկվել 2017թ.-ի հաղորդումները: Վերջիններս ունեցել են հետևյալ թեմատիկ ուղղվածությունները՝ զբոսաշրջության և տուրիստական գործակալությունների հետ կապված խնդիրների բարձրաձայնում, դասական արվեստ, գեղեցկության մրցույթ, Սուրբ Սարգսի տոն, գազի սակագների նվազում, սննդամթերքի որակի և պիտանելիության ժամկետին առնչվող խնդիրներ, դպրոցներում գրքերի սակագների

[2] Հաղորդաշարի նպատակի սահմանումը դուրս է բերվել https://www.1tv.am/hy կայքից

հետ կապված խնդիրներ և այլն: Ըստ էության, հաղորդումն անդրադարձ է կատարում հանրությանը հուզող և հետաքրքրող մի շարք խնդիրների, սակայն հաղորդաշարը չի ծածկում փորձագետների կողմից առավելապես շեշտադրված և կարևոր համարվող հանրային խնդիրներին՝ տնտեսական համակարգի փոխակերպմանը, չձևավորված կուսակցություններին, պրոտեկցիայի առկայությանը, թերի կառավարմանն ու կադրային քաղաքականությանը բնապահպանական, սեյսմիկ անվտանգության խնդիրներին, գյուղատնտեսությանը և այլն: Ըստ էության, կարող ենք տեսնել, որ այս դեպքում ունենք փորձագետների կողմից առանձնացված և հասարակության կողմից մատնանշած հանրային խնդիրների լուսաբանման բաց, որը կարող է ինչպես լրացվել արդեն եղած հաղորդաշարի շրջանակներում, այնպես էլ բարձրաձայնվել մեկ այլ, բոլորովին նոր հաղորդման մեջ:

Երկրորդ հաղորդաշարը, որն այս կամ այն կերպ անդրադառնում է հանրային խնդիրներին «Առավոտ լուսո» հաղորդաշարն է, որն իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում Հանրային հեռուստաալիքի եթերում, քանզի ցուցադրվում է աշխատանքային բոլոր օրերին՝ առավոտյան: Հաղորդաշարի տևողությունը երկու ժամ է, իսկ բովանդակությունը՝ բավականին ընդգրկուն: Որոշ հաղորդումների ընթացքում կարող ենք տեսնել անդրադարձ նաև հանրային համարվող որոշակի խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, երթուղայինների հետ կապված անհարմարությունները, զբոսաշրջության և հանգստի կազմակերպման հետ կապված խնդիրները և այլն: Ուսումնասիրելով հաղորդաշարի բովանդակությունը՝ կարող ենք եզրակացնել, որ, ինչպես և նախորդ հաղորդման դեպքում, այստեղ ևս բաց են թողնված այն առաջնային հանրային խնդիրները, որոնք բարձրաձայնվել են փորձագետների կողմից: Ըստ էության, «Առավոտ լուսո» հաղորդաշարը, լինելով ամենօրյա ցուցադրվող հաղորդում, մեծ դեր կարող է ունենալ հանրային խնդիրների բարձրաձայնման հարցում:

Առանձնացված երրորդ հաղորդաշարը «Հրապարակում»-ն է, որը թողարկվում է շաբաթական երկու անգամ (հինգշաբթի, ուրբաթ)՝ 16 րոպե տևողությամբ: «Հրապարակում» հաղորդաշարի նպատակը սահմանված է հետևյալ կերպ. *«Լրատվական հաղորդաշարը լուսաբանում է ՀՀ կառավարության ընթացիկ գործունեությունը: Ներկայացվում են կառավարության ընդունած որոշումների*

հանրային նշանակությունը, տարբեր ոլորտներում գործադիր իշխանության ծրագրերի իրագործման ընթացքն ու փաստացի արդյունքները».[3] Ի տարբերություն «Մասնագիտությունը՝ լրագրող» հաղորդաշարի՝ «Հրապարակում»-ի նպատակը ոչ այնքան հանրային խնդիրների քննարկումն է, որքան կառավարության գործունեության մասին հանրությանն իրազեկելն է: Հաղորդաշարի բովանդակային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հաղորդաշարի ընթացքում անդրադարձ է կատարվում այն խնդիրներին, որոնք փորձագետների կողմից համարվել են հանրային կարևորություն ունեցող խնդիրներ: Այդպիսիք են, մասնավորապես, տնտեսության զարգացման խնդիրները, կառավարության գործունեության թափանցիկության մասին տեղեկատվությունը, Եվրասիական միության անդամակցության հարցը, արդարադատության ոլորտում փոփոխությունները և այլն: Ըստ էության, կարող ենք ասել, որ առանձնացված այս երեք հաղորդաշարերից միայն «Հրապարակում» հաղորդաշարն է անդրադարձ կատարում այն խնդիրներին, որոնք առանձնացվել և քննարկվել են փորձագետների կողմից: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ առանձնացված երեք հաղորդաշարերից թերևս «Հրապարակում»-ն է, որը որոշ չափով անդրադարձ է կատարում փորձագետների կողմից առանձնացված հանրային խնդիրներին, սակայն սա նաև ցուցադրման ամենաքիչ հաճախականությունը (շաբաթը 2 անգամ) և տևողությունն ունեցող հաղորդումն է (16 րոպե): Բովանդակային վերլուծության արդյունքներից կարող ենք դուրս բերել նաև, որ «Հրապարակում» հաղորդաշարի շրջանակներում հանրային կարևորություն ունեցող խնդիրներին կատարվում է ակնարկային անդրադարձ, որը կարելի է փոխարինել երկարատև հաղորդումների շարքով:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրելով Առաջին ալիքի եթերացանկը, կարող ենք նկատել, որ այն առավել ուղղված է հանրային կրթվածության և տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, ինչը կարելի է նկատել գերիշխող հաղորդաշարերի բովանդակությունից: Ընդ որում, տեղեկացվածություն ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե իրավունքի, օրենքների վերաբերյալ, գյուղատնտեսության, բնապահպանական խնդիրների, քաղաքացիական ներգրավվածության վերաբերյալ տեղեկատվության

[3] Հաղորդաշարի նպատակի սահմանումը դուրս է բերվել https://www.1tv.am/hy կայքից

տրամադրում, այլ առավելապես ուսուցողական բնույթ ունեցող, ընդհանուր որոշակի գիտելիքների ուսուցանում: Այդպիսիք են մասնավորապես «Հայաստանի առեղծվածներ» հաղորդաշարը, որն ուղղված է բոլոր վիճահարույց խնդիրների՝ վերհանմանը գիտության ու փաստերի լեզվով, մասնագետների օգնությամբ, «Արքիմեդիա» ուսուցողական ծրագիրը, որը նվիրված է ֆիզիկայի բաժինների ներկայացմանը և այլն: Հանրային հեռուստաընկերության որդեգրած ռազմավարության մեջ կարող ենք տեսնել նաև կրթության ոլորտի փորձագետի կողմից առաջարկված՝ հասարակությանը «հերոսների» ոգով կրթելու մեխանիզմի կիրառությունը: Դրա մասին են վկայում այնպիսի հաղորդաշարերի առկայությունը, ինչպիսիք են «Նվիրյալները», «Իմ բանակը»:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ Հանրային հեռուստաալիքի եթերացանկն ուղղված է առավելապես զարգացնող և ուսուցողական հաղորդումների թողարկմանը: Փորձագետների կողմից մատնանշված հանրային կարևորություն ունեցող խնդիրները ամբողջությամբ արտացոլված և բարձրաձայնված չեն Առաջին ալիքով ցուցադրվող հաղորդաշարերում:

Ամփոփում և առաջարկներ

Փորձագետների հետ իրականացված հարցազրույցները թույլ են տալիս եզրակացնել, որ այսօր Հայաստանն ընդհանուր առմամբ գտնվում է ձևավորման և բարեփոխման փուլում. տարբեր ոլորտի փորձագետների կողմից առանձնացրած խնդիրների հիմքն այս հանգամանքն է: Հայաստանում կայացման փուլում են գտնվում տնտեսական համակարգը, քաղաքական ինստիտուտները, կրթական համակարգը, իրավական դաշտը, որոնք ոչ լիարժեք գործառնման արդյունքում առաջացնում են հանրային նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ:

Փորձագետների կողմից առանձնացված խնդիրների և դրանց առաջացման պատճառներից ելնելով՝ կարող ենք առանձնացնել հանրային խնդիրների առաջացման արտաքին և ներքին պատճառներ: Առաջինը պայմանավորված է Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքով և ընդհանուր համաշխարհային խնդիրներով, որոնք անդրադառնում են նաև հայ իրականության վրա: Երկրորդի դեպքում նկատի ունենք այն պատճառները, որոնք մասնագետների բնորոշմամբ ունեն «հայաստանյան արմատներ»: Վերջիններիս շարքին են դասվում կառավարման չձևավորված համակարգը, կադրային սխալ քաղաքականությունը, համապատասխան ինստիտուտների, կառույցների բացակայությունը կամ ոչ լիարժեք գործառնումը և հասարակության քաղաքացիական գիտակցության ցածր մակարդակը:

Փորձագետների կողմից նշված հանրային խնդիրների առաջացման պատասխանատու համարվում է իշխանությունը, որն ունի սուբյեկտիվ գործելառճ: Խնդիրների լուծման պատասխանատուների մասին խոսելիս՝ մասնագետները գտնում են, որ ընդհանուր առմամբ իշխանությունն է հիմնական պատասխանատուն, քանի որ ունի ուժ և որոշումներ կայացնելու լիազորություն, սակայն խնդիրների լուծման գործընթացում կարևորվում է նաև հասարակության ու օժանդակ ագենտների մասնակցությունը, որոնց մեջ հատկապես շեշտադրվում են ԶԼՄ-ը, իսկ վերջիններիս շարքում հատկապես կարևորվում է հեռուստատեսությունը՝ իբրև առավել ազդեցիկ լրատվամիջոց:

Այս տեսանկյունից վերլուծության է ենթարկվել Հանրային հեռուստաալիքի եթերացանկը, որի արդյունքում պարզվել է, որ Հանրային հեռուստաալիքն, ըստ էության, ունի իր եթերացանկում հանրային խնդիրների բարձրաձայնմանն ուղղված հաղորդաշարեր: Վերջիններիս շարքին են դասվում «Մասնագիտությունը՝ լրագրող», «Հրապարակում» և «Առավոտ լուսո» հաղորդաշարերը: Սրանք, չնայած այն բանին, որ անդրադառնում են հանրային որոշ խնդիրներին, սակայն, ամբողջությամբ չեն արտացոլում հանրային կարևորություն ունեցող այն հիմնական խնդիրները, որոնք նշվել են փորձագետների կողմից: Հանրային կարևորություն ունեցող միայն որոշ խնդիրների են անդրադարձ կատարվում, ընդ որում՝ ամփոփ կերպով: Հանրային հեռուստաընկերության եթերացանկն առվելապես ուղղված է ճանաչողական և ուսուցողական հաղորդումներին, իսկ հանրային կարևորություն ունեցող խնդիրներին անդրադարձող հաղորդումները համընդգրկուն չեն: Ելնելով փորձագետների կողմից բարձրաձայնած խնդիրների յուրահատկություններից՝ նպատակահարմար է ընդլայնել և լրացնել քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, հանրային կարևորություն ունեցող խնդիրների կամ վիճահարույց դեպքերի քննարկմանը նվիրված հաղորդումների շարքը:

Ամփոփելով և համադրելով հարցազրույցներից ստացված տվյալները և Առաջին ալիքի եթերացանկի բովանդակային վերլուծության արդյունքները՝ Հանրային հեռուստատեսությանը առաջակվում է՝

- Վերանայել եթերացանկում հանրային խնդիրներին վերաբերող հաղորդումների բովանդակությունն ու հատկացվող ժամանակը՝ հաշվի առնելով փորձագիտական հարցարզույցների արդյունքների վերոհիշյալ վերլուծությունը:
- Մշակել և հեռուստատեսությամբ ցուցադրել հանրային խնդիրների շուրջ բանավեճային ձևաչափ ունեցող հաղորդաշարեր՝ ուղղված հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:
- Հանրային հեռուստաընկերության եթերացանկում ներառել հանրային կյանքին վերաբերող, հանրության կողմից «չգիտակցվող» և տեղեկատվության սակավություն ունեցող ոլորտների մասին շարունակական հաղորդաշարեր:

Այդպիսի ոլորտների շարքին են դասվում բնապահպանական ոլորտն ու գյուղատնտեսության ոլորտը: Ըստ էության, բնապահպանական խնդիրները չեն գիտակցվում հանրության կողմից, սակայն չեն շրջանցում հասարակության և ոչ մի անդամին: Բնապահպանական և էկոլոգիական խնդիրների մասին բարձրաձայնող հաղորդաշարը կբարձրացնի հասարակության իրազեկվացությունը և պատկերացուումը խնդրի լրջության մասին: Գյուղատնտեսության ոլորտը յուրահատուկ է այնքանով, որ ունի իր հստակ թիրախային խումբը, որի տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրն, ըստ էության, հեռուստատեսությունն է (խոսքը գյուղացիների մասին է, ում համար տեղեկատվության հիմնական աղբյուր շարունակում է մնալ հեռուստատեսությունը): Գյուղացիների համար օգտակար հաղորդաշարի մշակման ընթացքում նպատակահարմար կլինի հաշվի առնել ժամային և սեզոնային յուրահատկությունները՝ ելնելով գյուղացիների աշխատանքների բնույթից: